

«ԱԼՖԱՍԵԲՅՈՒՐԻԹԻՉ»

Սահմանափակ Պատասխանատվության Ընկերության

2018թ. տարեկան ֆինանսական վերլուծություն

2018թ. Ընկերության ռազմավարությունը նպատակաուղղված է եղել այնպիսի միջնաժամկետ նպատակների իրականացմանը, ինչպիսիք են Ընկերության ֆինանսական ցուցանիշների կայունության ապահովումը, ներդրումային շուկայում գործունեություն իրականացնող ընկերությունների շարքում մրցունակ լինելը, Ընկերության ընդհանուր կապիտալի նվազագույն չափի նորմատիվի ապահովումը, հաճախորդների կայուն սեզմենտի ապահովումը: ՀՀ ֆինանսական ցուցանիշները 2018 թվականի ընթացքում շարունակել են դրական ազդեցություն թողել Ընկերության գործունեության արդյունքների վրա:

2018 թվականի ընթացքում ՀՀ կենտրոնական բանկի վերաֆինանսավորման տոկոսադրույքը մնացել է անփոփոխ և տարեվերջին կազմել է՝ 6.0%, հետևաբար ՀՀ կենտրոնական բանկի կողմից տրամադրվող լոմբարդային ռեպոյի տոկոսադրույքը և ՀՀ կենտրոնական բանկի կողմից բանկերից ներգրավվող միջոցների տոկոսադրույքը մնացել են անփոփոխ՝ կազմելով տարեվերջին համապատասխանաբար 7.5% և՝ 4.5%:

Չնայած վերոգրյալին՝ 2018 թվականի ընթացքում շուկայում նկատվել է շրջանառության մեջ գտնվող պետական պարտատոմսերի մինչև մարում եկամտաբերության կորի նվազում: Կորի նվազումը ազդեցությունը է ունեցել կնքվող ռեպո գործարքների համար նախատեսված արժեթղթերի գնահատման վրա, իսկ ինչ վերաբերվում է ռեպո գործարքների տոկոսադրույքին, ապա այն ողջ տարվա ընթացքում կտրուկ տատանումներ չի ունեցել և տատանվել է 6.5%-ի շուրջ:

Ընկերության պետական պարտատոմսերի պորտֆելի 84%-ը /միջին տարեկան ցուցանիշ/ դասակարգված է եղել որպես ամորտիզացված արժեքով հաշվառվող ֆինանսական ակտիվներ, ինչի արդյունքում եկամտաբերության կորերի նվազումը էականորեն չի ազդել Ընկերության գուտ տոկոսային եկամուտի վրա, որը 2017 թվականի համեմատ գրեթե անփոփոխ է մնացել:

Ընդլայնելով իր գործընկերների շրջանակը՝ 2018 թվականին Ընկերությունը վերսկսել է համագործակցությունն 'Արդշինբանկ' ՓԲԸ-ի հետ:

2018 թվականի արդյունավետ գործունեության արդյունքում Ընկերությունը ներառվել է ՆԱՄԴԱԶ ՕԷՄԷՔՍ Արմենիա -ի կողմից հրապարակվող Գործակալների և պոտենցյալ մասնակիցների ցուցակում:

2018 թվականին Ընկերությունը ներգրավել է ֆիզիկական և իրավաբանական անձ նոր հաճախորդներ, որոնց հետ կնքվել են ՀՀ պետական պարտատոմսերի առք ու վաճառքի պայմանագրեր և հակադարձ ռեպո գործարքներ: 2018 թվականի ընթացքում Ընկերությունն ընդլայնել է ոչ հիմնական ներդրումային ծառայությունների ծավալը՝ մասնավորապես պահառությունը և արժեթղթերի փաթեթի կառավարումը: Որոշ հաճախորդներ նախընտրել են իրենց ներդրումների զգալի հատվածը հանձնել արժեթղթերի փաթեթի կառավարմանը:

2018 թվականի գործունեության ընթացքում ընդհանուր կապիտալի, ընդհանուր պարտավորությունների և ընդհանուր ակտիվների միջև հարաբերակցությունները անփոփոխ են մնացել նախորդ տարվա նույն ժամանակահատվածի նկատմամբ: Ամփոփելով Ընկերության հաշվետու տարվա գործունեության արդյունքները՝ կարող ենք արձանագրել, որ Ընկերությունը գերակատարել է նախորդ տարվա գործարար ծրագրով նախատեսված ցուցանիշը՝ 2018 թվականին ապահովելով 197.9 մլն դրամ շահույթ:

Նախատեսված խնդիրների կատարողականը գնահատվում է հետևյալ կերպ.


ա) ներդրումային ընկերության կապիտալիզացումը.

Ընկերության ընդհանուր կապիտալը 2018 թվականի վերջում նախատեսվում էր ունենալ 924.2 մլն դրամ, արդյունքում ապահովել է 706.4 մլն դրամ, որը կազմում է գործարար ծրագրով նախատեսված ծավալի 76.4%-ը:

Ընդհանուր ակտիվների փաստացի ծավալը 12.3 մլդ դրամից դարձել է 9.7 մլրդ: Ընդհանուր ակտիվներում 1.8 մլդ դրամը կազմում են հաճախորդների նկատմամբ պահանջները:

Ակտիվների և պարտավորությունների նվազումը կապված է հաճախորդների նկատմամբ պահանջների նվազմամբ, ինչը պայմանավորված է հիմնականում ներդրողների միջոցներն արժեթղթերի փաթեթի կառավարմանն ուղղելուն: 2018 թվականի ընթացքում Ընկերությունն ակտիվորեն ընդլայնել է արժեթղթերի փաթեթի կառավարման շրջանակներում իրականացվող ծառայությունների ծավալը:

2018 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ արժեթղթերի փաթեթի կառավարման ծավալն ՊՊ անվանական արժեքով կազմել է 2.541 մլդ դրամ՝ 3.126 մլդ դրամ գնահատված արժեքով: Հաճախորդների անունից գործող հավատարմագրային կառավարիչը հաճախորդի միջոցները ներդրել է պետական պարտատոմսերում, ինչի համար անհրաժեշտ լրացուցիչ միջոցները ներգրավել է ՀՀ ռեզիդենտ բանկերից և Ընկերությունից ռեպո և հակադարձ ռեպո համաձայնագրերի միջոցով: Այս նպատակով Ընկերությունը 2018 թվականի ընթացքում անվանատիրոջ հաշիվներ է բացել ևս երկու բանկերում («Կոնվերսբանկ» ՓԲԸ և «Այրի բանկ» ՓԲԸ): Ակտիվ գործունեության արդյունքում Հավատարմագրային կառավարիչը դեկտեմբերի 31-ի դրությամբ հետևյալ ծավալի ռեպո գործարքներ է ունեցել.



Այսպիսով՝ Ընկերությունը 2018 թվականի ընթացքում մատուցել է ոչ հիմնական ներդրումային ծառայություններ, ինչի արդյունքում ապահովել է 10,964 մլն դրամ եկամուտ:

Ընկերության հաշվեկշռի այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով իրական արժեքով չափվող ակտիվների դասում հաշվառվում են ինչպես Ընկերությանը պատկանող, այնպես էլ հաճախորդներին պատկանող արժեթղթեր. այս պատճառով 2017 և 2018թթ տարեկան ցուցանիշները համադրելի չեն: Կարող ենք


շեշտել, որ Ընկերությանը պատկանող այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական ակտիվները 2017 թվականի 581.8 մլն դրամի համեմատ աճել են՝ դառնալով 2.097 մլդ դրամ:

Պահանջներ հաճախորդի նկատմամբ դասը ինչպես ակտիվներում, այնպես էլ պարտավորություններում 2017 թվականի համեմատ նվազել է, ինչը պայմանավորված է հաճախորդների կողմից ներդրված միջոցների՝ Ընկերության ոչ հիմնական ծառայությունների մատուցմանն ուղղմանը՝ մասնավորապես արժեթղթերի փաթեթի կառավարմանը, ինչը հաշվապահական ձևակերպման արդյունքում արտացոլվում է արտահաշվեկշռում:

Ընդհանուր պարտավորությունները 2018 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ կազմել են 9.0 մլդ դրամ՝ նախատեսված 12.8 մլդ դրամի փոխարեն:

Գլխավոր պահուստը մնացել է անփոփոխ՝ կազմելով 37.5 մլն դրամ /կանոնադրական կապիտալի 15%-ը/: 2018 թվականի գործունեության ընթացքում ընդհանուր կապիտալի, ընդհանուր պարտավորությունների և ընդհանուր ակտիվների միջև հարաբերակցությունները անփոփոխ են մնացել: Ընդհանուր կապիտալի և ընդհանուր պարտավորությունների հարաբերակցության մակարդակը 2018 թվականի ընթացքում կազմել է 7.8%, իսկ ընդհանուր կապիտալի և ընդհանուր ակտիվների հարաբերակցության մակարդակը՝ 7.3%:

Ընկերության արդյունավետ գործունեությունը պայմանավորված է նաև ՀՀ ֆինանսների նախարարության կողմից տեղաբաշխած միջին ժամկետային և երկարաժամկետ պետական պարտատոմսերի մինչև մարում եկամտաբերության տոկոսադրույքների իջեցմամբ, ինչի արդյունքում համապատասխանաբար նաև նվազել են ՀՀ կենտրոնական բանկի կողմից տրամադրվող պետական պարտատոմսերի մինչև մարում եկամտաբերության կորերը:




Կորի իջեցումը հանգեցրել է նրան, որ 2018 թվականի ընթացքում ձեռք բերված ՀՀ պետական պարտատոմսերի եկամտաբերությունը ցածր է եղել 2017 թվականի համեմատ, և ազդել է զուտ առևտրային եկամուտը նվազմանը:


ը) ներդրումային հիմնական և ոչ հիմնական ծառայությունները.

2018 թվականի ընթացքում Ընկերությունը ներդրումային հիմնական և ոչ հիմնական ծառայություններն իրականացրել է ինչպես ՀՀ պետական, այնպես էլ ոչ պետական պարտատոմսերով:

Ընկերության պորտֆելը բաղկացած է հետևյալ արժեթղթերից.



Ինչպես կարող ենք նկատել, Ընկերությունն ունի ինչպես երկարաժամկետ, այնպես էլ միջնաժամկետ պետական պարտատոմսեր՝ համապատասխանաբար 62.4% և 37.6%:



Ընկերությունը 2018 թվականի ընթացքում շարունակել է ակտիվ գործառնություններ իրականացրել երկրորդային շուկաներում: Ընկերությունը առաջնային տեղաբաշխման և հետգնման աճուրդների իր մասնակցությունը կատարել է գործակալների միջոցով: Արդյունավետ գործունեության արդյունքում Ընկերությունը ներառվել է ՆԱՄԴԱԲ ՕԷՍԷԲՍ Արմենիա -ի կողմից հրապարակվող Գործակալների և պոտենցյալ մասնակիցների ցուցակում: 2018 թվականի չորրորդ եռամսյակում գործակալների և պոտենցյալ մասնակիցների վարքագծի գնահատման ցուցակում Ընկերությունն առաջինն է եղել:

Պոտենցյալ մասնակից	Եռամսյակային գնահատական
ԱԼՖԱՍԵԲՅՈՒԲԻԹԻՉ ՍՊԸ	7
ՌԵՆԵՍԱ ՓԲԸ	6
«Էյ-Էս-Բի-Սի Բանկ Հայաստան» ՓԲԸ	5
«Արցախբանկ» ՓԲԸ	4
ԱՐՄԵՆԲԲՈԿ ԲԲԸ	3
«ԷՎՈԿԱԲԱՆԿ» ՓԲԸ	2
«Բիբլոս Բանկ Արմենիա» ՓԲԸ	1


Ինչ վերաբերում է Գործունեության վարքագծի գնահատման տարեկան ցուցանիշին, ապա այն հաշվարկվել է գործակալների 2017 թվականի հոկտեմբերի 1-ից մինչև 2018 թվականի հոկտեմբերի 1-ը միայն առաջնային շուկայում

մասնակցության և երկրորդային շուկայում ակտիվության ցուցանիշների արդյունքներով: Եռամսյակային գնահատականը հաշվարկվում է առաջնային շուկայում մասնակցության միավորի 40%-ին ավելացնելով երկրորդային շուկայում ակտիվության միավորի 60%-ը:

Պոտենցիալ մասնակից	2017-4	2018-1	2018-2	2018-3	Տարեկան գնահատական
«ԷՎՈՎԱԲԱՆԿ» ՓԲԸ	6	6	3	6	21
ՌԵՆԵՍԱ ՓԲԸ	5	7	5	1	18
ԱԼՖԱՍԵՔՅՈՒՐԻԹԻՉ ՍՊԸ	4	5	6	3	18
«Բիբլոս Բանկ Արմենիա» ՓԲԸ	0	2	7	7	16
«ԱԿԲԱ-ԿՐԵԴԻՏ ԱԳՐԻԿՈՒ ԲԱՆԿ» ՓԲԸ	3	0	1	5	9
«Այ Դի Բանկ» ՓԲԸ (նախկին «Անելիք Բանկ» ՓԲԸ)	2	4	2	0	8
ՖՅՈՒՉՐ ԿԱՊԻՏԱԼ ՄԱՐԿԵՏ ՍՊԸ	0	3	0	4	7

Հանախորդների բարձրորակ սպասարկման նպատակով Ընկերությունը որոշել է ավելացնել այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով իրական արժեքով չափվող ակտիվների ծավալը և 2018 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ կազմել է 27.3%՝ նախորդ տարվա 9%-ի փոխարեն: Համապատասխանաբար ամորտիզացված արժեքով պահվող ներդրումները կազմել են 72.7%-ը: Ընկերության ՀՀ պետական պարտատոմսերի պորտֆելի այս կառուցվածքը թույլ է տալիս ունենալ կայուն եկամուտ և գերծ մնալ շուկայական տոկոսադրույքների տատանումներից առաջացած վնասից: 31.12.18 թվականի դրությամբ ամորտիզացված արժեքով հաշվարկվող ՀՀ պետական պարտատոմսերի ծավալը կազմել է 5.341 մլդ դրամ, այսպիսով պորտֆելի հաշվեկշռային արժեքը 720 մլն դրամով գերազանցում է նրանց շուկայական արժեքից, ինչը հետևանք է նախորդ տարիներին ձեռք բերված բարձր եկամտաբերությամբ պարտատոմսերի:

Պետական պարտատոմսերի պորտֆելի կառուցվածքը 31.12.18 դրությամբ (հազար դրամ)



Ինչպես նշեցինք, Ընկերության պետական պարտատոմսերի պորտֆելը 31.12.2018 թվականի դրությամբ կազմել է 6.6 մլդ դրամ՝ անվանական արժեքով: Միջոցները հիմնականում ներգրավվել են ՀՀ ռեզիդենտ բանկերից ռեպո համաձայնագրերի միջոցով: Չսահմանափակվելով Ընկերության գործող արդյունավետության մակարդակում՝ Ընկերությունը 2018 թվականին շարունակում է էլ ավելի օպտիմալացնել և ընդլայնել իր գործունեությունը: 2018 թվականին Ընկերությունը վերսկսել է համագործակցությունն «Արդշինբանկ» ՓԲԸ-ի հետ:

Ընդհանուր տոկոսային եկամուտների մեջ զգալի մասը զբաղեցնում է պետական պարտատոմսերից ստացված եկամուտը, 2018թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ կազմել է 707.7 մլն դրամ:

Երկրորդ զգալի մասը կազմել է ռեպո համաձայնագրերից ստացված եկամուտը, 2018թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ կազմել 217.2 մլն դրամ:

Բացի պետական պարտատոմսերից՝ Ընկերությունը ընդլայնել է կորպորատիվ պարտատոմսերի պորտֆելը, որը ապահովել է 4.8 մլն դրամ տոկոսային եկամուտ:

Այսպիսով, 2018 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ Ընկերության ընդհանուր տոկոսային եկամուտը կազմել է 931.0 մլն դրամ:


գ) Ընկերության շահութաբերությունը, եկամուտները և ծախսերը.

Ընկերությունն իր առջև խնդիր էր դրել ապահովել 2.0-2.5% եկամտաբերության մարժա ներգրավված և տեղաբաշխված միջոցների տոկոսադրույքների միջև:

Ընկերության տոկոսային եկամուտները նախորդ տարվա համադրելի ժամանակաշրջանի համեմատ աճել են 0.5%-ով և կազմել 931.0 մլն դրամ: Տոկոսային եկամուտները հիմնականում ձևավորվել են պետական պարտատոմսերում ներդրումներից:

Ընկերության տոկոսային ծախսերը նախորդ տարվա համադրելի ժամանակաշրջանի համեմատ անել են 3%-ով և կազմել 536.1 մլն դրամ:

Ընկերությունը 2018 թվականի ընթացքում միջին օրական կտրվածքով ունեցել է 8.154 մլդ ՀՀ դրամի ռեպո գործարքներ՝ միջինը 6.55% տարեկան եկամտաբերությամբ: Ներկայացնենք նաև հունվար-դեկտեմբեր ամիսներին կնքված ռեպո գործառնությունների ընկերության միջին և շուկայական միջին կշռված տոկոսադրույքների համեմատությունը: Ընկերությունն իրականացրել է 19 հակադարձ ռեպո գործարքներ և 2018 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ ունեցել է 14 գործող հակադարձ ռեպո պայմանագիր միջինը 7.10% տարեկան եկամտաբերությամբ:



Ինչպես կարելի է նկատել ռեպո տոկոսադրույքը ողջ տարվա ընթացքում տատանվել է 6.5%-ի շուրջ և կտրուկ տատանումներ չի ունեցել:

Այսպիսով, 31.12.18 դրությամբ ընդհանուր տոկոսային ծախսը եղել է 536.1 մլն ՀՀ դրամ՝ պակաս լինելով գործարար ծրագրով նախատեսված 900 մլն-ից:

	31.12.17	31.12.18	2018թ. կանխ.
Տոկոսային և նմանատիպ եկամուտներ	927,206	931,031	1,200,000
Տոկոսային և նմանատիպ ծախսեր	520,277	536,132	900,000
Չուտ տոկոսային և նմանատիպ եկամուտ	406,929	394,899	300,000
Ժամանակահատվածի շահույթ/վնաս	214,586	197,894	103,600

Այսպիսով, 2018 թվականի ֆինանսական շուկայում ստեղծված բարենպաստ իրավիճակը թույլ են տվել, որ 2018 թվականի գուտ տոկոսային եկամուտները տարեվերջին կազմեն 394.9 մլն դրամ: Հաշվի առելով, որ Ընկերությունը գործարար ծրագրով նախատեսել էր ունենալ 300 մլն գուտ տոկոսային եկամուտ, կարող ենք ասել, որ Ընկերությունը գերակատարել է իր կանխատեսումները 31.6%-ով, ինչից վստահորեն կարելի է ենթադրել, որ Ընկերությունն արդյունավետ կերպով կատարում է իր առջև դրված նպատակները:

դ) հաճախորդների քանակը, վերջիններիս փոփոխության դինամիկան.

2018 թվականին Ընկերությունը ներգրավել է ֆիզիկական և իրավաբանական անձ նոր հաճախորդներ, որոնց հետ կնքվել են ՀՀ Պետական պարտատոմսերի առք ու վաճառքի պայմանագրեր և հակադարձ ռեպո գործարքներ: 2018 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ Ընկերությունը ռեզիդենտ հաճախորդների հետ ունեցել է հակադարձ ռեպո պայմանագրեր (989 մլդ դրամ, անվանական արժեքը՝ 1.144 մլդ դրամ): Փոխառության տրված արժեթղթերը նախորդ տարվա համեմատ ավելացել են 7.2 մլն-ով և կազմել 81.4 մլն դրամ: Ինչ վերաբերում է պահառությանը, ապա 2018 թվականին հաճախորդների շրջանում ակտիվություն է նկատվել և պահառության է հանձնվել 104.5 մլն դրամ անվանական արժեքով պետական պարտատոմս: Բացի այս՝ հաճախորդներն իրենց միջոցների զգալի հատվածը վստահել են արժեթղթերի փաթեթի կառավարմանը, ինչի արդյունքում դեկտեմբերի 31-ի դրությամբ Ընկերության արժեթղթերի փաթեթի կառավարման պորտֆելը կազմել է 2.541 մլդ դրամ:

Ներկայացնենք նաև 2018 թվականի չորրորդ եռամսյակի արդյունքում բոլոր ներդրումային ընկերությունների՝ հաճախորդների նկատմամբ պահանջների ծավալների համեմատությունը, որից հստակ երևում է, որ Ընկերությունը շարունակում է մնալ հաճախորդների սպասարկման ոլորտում առաջատարներից և գրավել շուկայի 30%-ից ավելին:



և) կադրային քաղաքականություն.

Ընկերությունն իր կադրային քաղաքականությունը կառուցում է երկարաժամկետ համագործակցության, աշխատակիցների նկատմամբ խրախուսման սկզբունքների հիման վրա: 2018 թվականի ընթացքում Ընկերությունն ավելացրել է աշխատակիցների քանակը՝ ընթացիկ գործունեությունն ավելի արդյունավետ, արագ և որակյալ կազմակերպելու համար:

2018 թվականի ընթացքում գործունեության ծավալների ընդլայնման արդյունքում Ընկերությունն արդյունավետությունն ավելացնելու նպատակով իր կադրային ներուժը համալրել է գործավար օպերատորով: Բացի այս փոխարինվել է պահառուի պաշտոնը զբաղեցնող աշխատակիցը:

Ընկերությունը մշտապես ուշադրություն է դարձնում սեփական կադրերի պատրաստման և վերապատրաստման աշխատանքներին, որը թույլ է տալիս աշխատակիցներին յուրացնել փոփոխվող օրենսդրական դաշտը, ուսումնասիրել գործընկերների հետ համագործակցության ուղիները, ներդրվող և մշակվող տեխնոլոգիաները և այլն: Ընկերությունը խրախուսում է նաև աշխատակիցների մասնագիտական որակավորումը և ձգտում է նրան, որ բոլոր աշխատակիցներն ունենան համապատասխան որակավորում: 2018 Ընկերությունը հրավիրել է Տեղեկատվական տեխնոլոգիաների գծով անկախ խորհրդատու, որը դասընթացներ է անցկացրել աշխատակիցների հետ տեղեկատվական և հեռահաղորդակցման համակարգերի անվտանգության ապահովման նպատակով:

Նշենք, որ Ընկերության բոլոր աշխատակիցներն ունեն բարձրագույն կրթություն, աշխատակիցների մեծամասնությունն ունի համապատասխան բարձր որակավորում և արժեթղթերի ոլորտում աշխատելու բազմամյա փորձ:

Ընկերության աշխատակիցները 2018 թվականի ընթացքում մասնակցել են տարբեր մասնագիտական որակավորման դասընթացների, բարեհաջող հանձնել են քննություններ և ստացել որակավորման վկայականներ, ինչն էլ վկայում է, որ Ընկերությունը շահագրգռված է լավագույն կադրեր պատրաստելու հարցում:

ր) նորամուծություններ.

Ընկերությունը 2018թ ընթացքում միջոցառումներ է ձեռնարկել ուսումնասիրելու Ռուսական և Հունական արժեթղթերի շուկաները, որը կարող է հետագայում արժեթղթերի շուկայում և ավելի գրավիչ դարձնել Ընկերության կողմից առաջարկվող ծառայությունների շրջանակը:

Ընկերությունը 2018թ ընթացքում լիարժեք օգտագործել է Հաշվապահական հաշվառման Հայկական ծրագրերը, հատուկ բանաձևերի կիրառման արդյունքում հեշտությամբ արտահանել է ՀՀ կենտրոնական բանկ հաշվետվությունների համար անհրաժեշտ տեղեկությունները: Պետական արժեթղթերով իրականացվող գործարքների արագ և որակով կատարման համար Ընկերությունը 2018 թվականին ևս մեկ բանկի հետ կնքել է գլխավոր համաձայնագիր և այդ գործարքներն իրականացնում է CBANET համակարգի միջոցով:

թ) մարկետինգային քաղաքականություն.

Ընկերության մարկետինգային քաղաքականությունը 2018 թվականին ուղղված է եղել պետական պարտատոմսերում ներդրումների ոլորտում կայուն դիրքերի գրավմանը, գործընկերների հետ փոխշահավետ համագործակցության ապահովմանը, ինչը նպաստել է հաճախորդների կայուն սեզմենտի ներգրավմանը:

Արժեթղթերի շուկայում գործունեության տասնյոթ տարվա շարունակական փորձը, գործնական կապերը, աշխատակիցների հմտությունը և իրազեկությունը թույլ են տվել ֆինանսական շուկայում ստեղծված իրավիճակում ժամանակին իրականացված գործողությունների արդյունքում ապահովել Ընկերության ընդհանուր կապիտալի նվազագույն չափի նորմատիվը:

Գործադիր տնօրեն

Գլխավոր հաշվապահ



Գ.Գրիգորյան

Կ.Միմոնյան